Սանթրոսյան Մանիկ Աշոտի

Ծնվել է 04.10.1983թ. Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում: 2000թ. ավարտել է Դիլիջանի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 2000-2004թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան: 2005-2007թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան: 27.07.2007 - 26.06.2009 թթ. աշխատել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական Կոմիտեի աշխատակազմի «Էրեբունի» տարածքային ստորաբաժանումում՝ որպես առաջին կարգի մասնագետ: 26.06.2009 - 13.12.2012թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության՝ պետության դեմ դատական պահանջների պաշտպանության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ, այնուհետև՝ գլխավոր մասնագետ /այդ ընթացքում՝ 01.06.2011 թվականին շնորհվել է քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան/: 13.12.2012-11.03.2013թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության՝ դատարաններում պետության գույքային շահերի պաշտպանության և գանձումների սպասարկման բաժնում՝ որպես բաժնի պետի տեղակալ: 11.03.2013-21.06.2018թթ. աշխատել է ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական վարչության դատահիրավական ապահովման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ /23.02.2017թ. շնորհվել է քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան/: 25.06.2018 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության՝ նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես բաժնի պետ: Տիրապետում է հայերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներին, ինչպես նաև՝ Microsoft-Word, Excel համակարգչային ծրագրերին: Ամուսնացած չէ: